ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/4171/02/24 ք. Երևան
3 Փետրվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ՝ նաև Դատարան), քննարկելով ըստ հայցի «Ծին նախագիծ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան համայնքային կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Պատասխանող)՝ թիվ 5 արձանագրության 3-րդ բաժինը (բացառությամբ 3.1, 3.2 և 3.3 կետերի) անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ «Հանձնաժողովի կայացրած որոշումները» բաժնի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերով կայացված որոշումները անվավեր ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գործը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝ թիվ 5 արձանագրության 3-րդ բաժինը (բացառությամբ 3.1, 3.2 և 3.3 կետերի) անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ «Հանձնաժողովի կայացրած որոշումները» բաժնի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերով կայացված որոշումները անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացվել է 27.05.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/4171/02/24 քաղաքացիական գործը, որը 29.05.2024 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի

ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Հովհաննիսյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Հովհաննիսյան) 04.06.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումը կրկին ներկայացվել է 06.06.2024 թվականին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Հովհաննիսյան) 12.06.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Հովհաննիսյան) 25.07.2024 թվականի վճռով հայցը մերժվել է:

Հայցվորի ներկայացուցչի կողմից 19.08.2024 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Հովհաննիսյան) 25.07.2024 թվականի վճռի դեմ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.12.2024 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է, թիվ ԵԴ2/4171/02/24 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Հովհաննիսյան) 25.07.2024 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության՝ որոշմամբ սահմանված ծավալով:

Թիվ ԵԴ2/4171/02/24 քաղաքացիական գործը 29.01.2025 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե սույն գլխով առանձնահատկություններ սահմանված չեն, ապա Համակարգի միջոցով իրականացվող գործողությունների վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանում գործի քննությունը, իսկ վերաքննիչ դատարանում բողոքի քննությունն անցկացվում են դատարանի անփոփոխ կազմով, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Դատարանի կազմը փոխվելու կամ կազմում փոփոխության դեպքում կայացվում է գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու մասին որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5.1-րդ մասի համաձայն՝ դատարանի կազմը փոխվելու կամ դատական կազմում փոփոխության դեպքում գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը որոշում է կայացնում գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն սկզբից սկսելու կամ գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու մասին, բացառությամբ առաջին ատյանի դատարանում գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքերի: Գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքում առաջին ատյանի դատարանը գործը վարույթ ընդունելու հետ միաժամանակ որոշում է կայացնում գործի քննությունն սկզբից սկսելու կամ գործը դատաքննության փուլից վերսկսելու

մասին:

Տվյալ դեպքում Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պետք է ընդունել վարույթ և գործի քննությունը սկսել սկզբից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Ըստ հայցի «Ծին նախագիծ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան համայնքային կառավարչական հիմնարկի՝ թիվ 5 արձանագրության 3-րդ բաժինը (բացառությամբ 3.1, 3.2 և 3.3 կետերի) անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ «Հանձնաժողովի կայացրած որոշումները» բաժնի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերով կայացված որոշումները անվավեր ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գործն ընդունել վարույթ և գործի քննությունը սկսել սկզբից:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2025.02.03 16:44:14 AMT **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am